

## Կ ա ր ծ ի ք

### Զինախոս Կանիի Բալայանի «Արցախը XIX դարի հայ գրականության մեջ» դոկտորական ատենախոսության վերաբերյալ

Իբրև արցախյան թեմայով գրականագիտական և պատմաբանասիրական համահավաք քննության առաջին փորձ, Զինախոս Բալայանի «Արցախը XIX դարի հայ գրականության մեջ» ուսումնասիրությունը հիմնարար կերպով բացահայտում է առաջադրված խնդիրները, յուրաքանչյուր երկի ժանրային և տիպաբանական առանձնահատկությունները:

Ատենախոսությունը բաղկացած է Ներածությունից, վեց գլուխներից՝ իրենց ենթամասերով.

Գլուխ I. Բաֆֆի. թարգմանական և վիպապատմական անդրադարձներ.

Մաս I. Առաջին թարգմանական վեպը Արցախի մասին Պլատոն Զուբովի ռուսերեն «Ղարաբաղի աստղագետը» վեպն է.

Մաս II. Բաֆֆու «Խամսայի մեղիքությունները», նրանց պատմական ճակատագիրը, երկի կերպարների համակարգը.

Գլուխ II. Ապրես Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի» վիճահարույց վեպը.

Գլուխ III. Մուրացանի գեղարվեստական երկերը՝ «Բաղտասար Մետրոպոլիտ Հասան-Ջալալյանցի համառոտ կենսագրությունը», «Ռուզան կամ հայրենասեր օրիորդ», «Խորհրդավոր միանձնուհի».

Գլուխ IV. Արցախը XIX դարի ուղեգրություններում՝ Մետրոպ Թադիադյան, Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանց, Հայկունի.

Գլուխ V. Արցախը XIX դարի պատմագեղարվեստական երկերում՝ Ղևոնդ Ալիշանի «Արցախ» երկը, Մակար Բարխուդարյանի արցախապատումը, Լեոյի «Մելիքի աղջիկը» պատմավեպը.

Գլուխ VI. Արցախը բանահյուսական նյութի գրական մշակմամբ՝ Կոստանդին Մելիք-Շահնազարյանի «Տմբլաչի Խաչան» ֆելիետոնների շարքը:

Այս ամենը, իհարկե, արտահայտություն է գտել Արցախի հայրենասեր գրողների ու բանաստեղծների գեղարվեստական էսսեների ու ակնարկների մեջ, վեպերում և դրամաներում: Հեղինակը ընթերցողին տեսանելի ներկայացնում է տարածաշրջանի պատմավիպական դաշտը, ընդգծում Հայոց Արցախի բարդ ու հակասական ժամանակաշրջանի քաղաքական, գրական, մշակութային կյանքի հասարակական տեղաշարժերը արցախահայության ազգային-ազատագրական մաքառումների համայնապատկերում: Արցախի մելիքների միջև ներքին հակասական հարաբերությունները սրվում էին՝ ենթարկվելով արտաքին ուժերի ջլատիչ ազդեցության: XVIII դարի կեսերից ի հայտ եկան Ղարաբաղի թուրքահպատակ Փանահ, Իբրահիմ, Մեհտի Ղուլի խաները՝ իրենց ժառանգներով:

1813 թվականի հոկտեմբերի 12-ին Արցախի Գյուլիստան գյուղում կնքված ռուս-պարսկական հաշտության պայմանագրից հետո, ռուսական ցարիզմի հակահայկական քաղաքականության թելադրանքով Ռուսական կայսրության մեջ մտցված Արցախը կոչվեց Ղարաբաղի խանություն: Որպես հետևանք, ազգային-ազատագրական շարժումը ծայրահեղ թշնամական արձագանք գտավ ցարական պահնորդական III բաժանմունքի գործակալների կողմից և դարձավ թուրք սուլթանների և ռուս կայսրերի որոգայթների թիրախ՝ խճողելով Արցախի քաղաքական կյանքը:

Աշխատության մեջ ցույց է տրվում Արցախի մելիքությունների քաղաքական նկարագիրը, միաբան և անմիաբան մելիքների միջև ընթացող առձակատումները, վեր է հանվում պատմական և վիպական կերպարների համակարգը:

Ատենախոսության մեջ գրականության և պատմության գեղարվեստական դրվագներով վերագնահատվում են պատմական երևույթները, որոնց մեջ դրսևորվում է ատենախոսի անհատական վերաբերմունքը պատմական և գեղարվեստական իրողությունների նկատմամբ՝ հայ գրականության ընդհանուր համապատկերում:

Ընթերցելով Ջ. Բալայանի «Արցախը XIX դարի հայ գրականության մեջ» աշխատությունը, որը կրկնակի գերազանցում է դոկտորական ատենախոսության համար ԲՈՎ-ի սահմանած 250 էջ ծավալը, պարզ է դառնում, որ այն իր տեսակի մեջ եզակի պատմաբանասիրական և գրականագիտական ուսումնասիրություն է:

Ներածության մեջ առաջադրված է ուսումնասիրության գիտական առարկան, ցույց է տրված արցախյան թեման, իբրև հայ գեղարվեստական գրականության անբաժանելի մաս: Ընդգծված են մեթոդական, տիպական, փիլիսոփայական և լեզվաառձակական առանձնահատկությունները, Արցախի թեմայով ստեղծված գրականության ընդհանուր բնութագիրը, ցույց է տրվում XIX դարավերջին գրական դաշտում առկա բանավեճերի սուր պատկերը:

Ինչպես տեսնում ենք, ատենախոսության վեց գլուխներում մեկտեղված են XIX դարի արցախյան գեղարվեստական գրականության հայտնի դեմքերը՝ հայ պատմա-գեղարվեստական գրականության մեջ համազգային փառք վայելող հեղինակների՝ Լեոյի (Առաքել Բաբայանյան), Սուրբաջանի (Գրիգոր Տեր-Հովհաննիսյան), որոնց կողքին իր «Խամսայի մելիքությունները» խորագնին պատմական քննությամբ փայլում է հայ ազատագրական շարժման առաջամարտիկ վիպասանը՝ Բաֆին (Հակոբ Մելիք-Հակոբյան): «Խամսայի մելիքությունները» բաղկացած է երկու մասից՝ առաջինը Բաֆի թարգմանական գործն է, երկրորդը՝ նրա սեփական հետազոտությունը:

Ատենախոսը նույնպիսի խորությամբ վեր է հանում նաև լայն ընթերցողին քիչ հայտնի ավանդազրույցների հիման վրա ստեղծված՝ ռուս գրող Պլատոն Չուբովի «Ղարաբաղի աստղագետը» վեպը հայերեն թարգմանությամբ, ապա և շատ գրաքննադատական վեճերի առարկա դարձած Ապրես Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի» ավանդախառն վեպը: Պլատոն Չուբովի պատմավեպը ընդգրկում է

1752 և 1826-28 թթ. ռուս-պարսկական պատերազմը, մելիքների ներքին առճակատումները, որպես հետևանք օտարամոլության, պարսիկների անհարկի միջամտությունները մելիքների ներքին կյանքին, որի ակնառու դերակատարը աստղագետ Հասանն էր, որպես մելիքների քաղաքական ճակատագիրը դեպի անկում տանող թշնամու հավաքական կերպար: Դրա տխուր շարունակությունն էր 1813 թվականից հետո ստեղծված Ղարաբաղի խանությունը, որի մասին նշեցինք վերևում:

Ատենախոսության վեց գլուխներում ներկայացված հեղինակներն իրենց երկերով՝ յուրաքանչյուրն առանձին վերցրած, կարող է մեկ դոկտորական աշխատանքի նյութ համարվել՝ ատենախոսի հարուստ մեկնաբանություններով, գրականագիտական համապատասխան քննությամբ և արժևորմամբ:

Ատենախոսի ուշադրությունից չեն վրիպել նաև Արցախի թեմայով գրված նամակներ, ուղեգրության բացառիկ նմուշներ, գուսանական երկեր, փոքր արձակի հրաշալի նմուշներ, բանաստեղծական առանձին չափածոներ:

Գիտական աշխատանքի II գլուխն իր ենթամասերով ներկայացնում է Ապրես Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի» երկի քննությունը: Ըստ ամենայնի, «Գաղտնիք Ղարաբաղի»-ն XIX դարավերջին հայ գրականության մեջ մերժումի ենթարկված այն գիրքն է, որի վերաբերյալ իր քննական վերագնահատման խոսքն է զարգացնում վերլուծաբանը, ըստ որի՝ 135 տարի հայ գրականության փակ էջ հայտարարված, XIX դարավերջին սուր բանավեճերի կիզակետում հայտնված «Գաղտնիք Ղարաբաղի»-ն՝ XVII դարավերջից մինչև XIX դարասկզբի արցախահայության կյանքի հանրագիտարան հանդիսացող երկը, միաժամանակ Հայոց Արցախի մելիքության ժամանակների հարազատ պատմություն է ներկայացնում:

Ատենախոսի լուրջ աղբյուրագիտական ծառայությունն է, որ նա քննության առնելով Բաֆֆու խիստ քննախոսությունը «Գաղտնիք Ղարաբաղի» ավանդավեպի մասին, ինչպես և Լեոյի «Վե՞պ թե՛ պատմություն», Հայկունու «Ուղեգնացական ակնարկներ» և Մակար Բարխուդարյանի «Քննադատություն քննադատության» արժեքավոր երկերը, արդյունքում հանգում է վճռական եզրակացության.

ա) «Գաղտնիք Ղարաբաղի»-ի հեղինակը Ապրես Բեկնազարյանն է,

բ) «Գաղտնիք Ղարաբաղի»-ի վիպապատմական հերոսները՝ հոգևոր և աշխարհիկ իշխանավորներն են, արցախահայությունը, Խամսայի մելիքները,

գ) «Գաղտնիք Ղարաբաղի»-ն ունի կուռ հյուսվածք, դեպքերի և դեմքերի տիպական, հաստատուն շղթա,

դ) «Գաղտնիք Ղարաբաղի»-ն ոչ մի դեպքում չի կարելի արտագրություն համարել «Խամսայի մելիքություններ»-ից: Ատենախոսը ջանադիր քննությամբ պարզաբանում է, որ Ապրես Բեկնազարյանի հայրը՝ Աբրահամ Բեկնազարյանը եղել է պարսից արքունիքում մեծ պաշտոնների հասած, մելիք Մեջլումի հավատարիմ և քաջ զորականը, որը պատվախնդրությամբ հավաքել է Արցախի քաղաքական ճակատագրին անմիջապես առնչվող փաստաթղթերը և այդ հավաքածուն է, որ

օգտագործել է նրա որդի Ապրես Բեկնազարյանը իր «Գաղտնիք Ղարաբաղի» գրքում, ե) «Գաղտնիք Ղարաբաղի» վեպի դեմ ուղղված հիմնական առարկությունը աստենախոսը համարում է հայ գրականության մեջ գերիշխող այն կասկածելի վերաբերմունքը, որ գոյություն ունի բանահյուսական ավանդությունների նկատմամբ: Ըստ այսմ, դրա վառ ապացույցը Լեոյի «Վե՞պ թե՛ պատմություն» գրվածքն է: Ուստի՝ ««Գաղտնիք Ղարաբաղի»-ն իրավամբ կարելի է համարել Արցախի գրականության և պատմության բարձրակարգ ու անանց հուշարձաններից մեկը» (սեղմագիր, էջ 27):

Աստենախոսության երրորդ գլուխը՝ իր երեք մասերով նվիրված է Մուրացանի երեք գործերի քննությանը:

Մուրացանի երկերի քննության մեջ աստենախոսը կարևորում է հեղինակի երեք երկերի ժանրային տարբերակումները, տիպաբանական, ոճական հարցադրումները, կերպարների (մեկիք Հասան Ջալալի դուստր Ռուզան (Ռուզուբան) և այլ ծանոթ կերպարներ) վերլուծությունները:

Որպես արցախյան գրականության համահավաք ուսումնասիրման փորձ, Ջ.Բալայանի «Արցախը XIX դարի հայ գրականության մեջ» աշխատանքը իր տեսակի մեջ եզակի ուսումնասիրություն է՝ չոռչափված թեմայի սուր մեկնություններով, ժխտման և հաստատման հարցադրումներով, նպատակասլաց հղացումներով և բազմաբովանդակ ծրագրով: Այդ հարցադրումներին էլ բանախոսը պատասխանել է գիտական կուռ լեզվով, առաջադրված խնդրի հանդեպ մնացել պատասխանատու, շարադրանքում ցուցաբերել ակտիվ հետազոտողի սկզբունքայնություն:

Ուսումնասիրության չորրորդ գլխում աստենախոսը ուղեգրական ժանրի շրջանակներում ներկայացնում է Մ. Թաղիադյանի, Սարգիս արքեպիսկոպոս Ջալայանցի, Հայկունու ստեղծագործությունները, որոնց մեջ տրվում է Հայոց Արցախի կյանքի վիպական և պատմական, բանագիտական, քաղաքական համապարփակ պատկերը:

Արցախի պատմագեղարվեստական նկարագիրը տրված է ուսումնասիրության երեք մասերից բաղկացած հինգերորդ գլխում: Երեք մասերում քննության ենթարկված գրքերը հայ գրականության փառավոր էջերից են: Աստենախոսը բացահայտում է Հայր Ղևոնդ Ալիշանի և Մակար Բարխուդարյանի «Արցախը» համանուն երկերում ցուցադրված՝ առաքինություններով պսակյալ Հայաստանի Արցախ աշխարհի վիպական, պատմական, աշխարհագրական, տեղագրական, վիճակագրական, ժողովրդագիտական և ծխական պատկերը:

Հայցորդը հինգերորդ գլխի III մասը նվիրել է Լեոյի «Մեկիքի աղջիկը» ավանդավեպի քննությանը, որը պատմավեպի ժանրի անմրցակից նմուշ պետք է համարել՝ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի մի բացառիկ նմուշ, «շաղկապված գրականության և պատմության փիլիսոփայությամբ, ազգային գաղափարաբանությամբ, ժողովրդի դերի բացահայտմամբ և նրա ազատաբաղձ ոգու վերակերտմամբ, մեկիքական և շինական տների համադրմամբ և հակադրմամբ, թշնամու դեմ զարմանահրաշ պայքարի և սխրանքների ցուցադրմամբ»:

Ի վերջո, «Մելիքի աղջիկը» պատմավեպն իր առաջադրած ազգային գաղափարակարգով քաղաքական մի այցեքարտ է, գեղարվեստի ունիկալ նմուշ, ազգային նպատակադիր մի ծրագիր՝ ուղղված սերունդներին, հայոց բոլոր ժամանակներին, հայ ժողովրդի պայքարը, հաղթություններն առաջնորդող համահայկական ազգային մի գերխնդիր, ազատ, ինքնիշխան, հաղթական Հայաստան կերտելու մի գերնպատակ» (սեղմագիր, էջ 38-39):

Աշխատանքի վերջին՝ VI գլուխը արցախյան յուրօրինակ ժողովրդական ասացվածքների հավաքածու է, որը բացահայտում է արցախյան լեզվի և բնավորության սրամիտ և գրավիչ շերտերը: Այս ամենը ատենախոսը ի ցույց է դնում Կ.Մելիք-Շահնազարյանի ֆելիետոնների ժանրով հյուսված «Զուտնա-Տմբլա» (Ա, Բ) ժողովածուների վերլուծությամբ, կերպարների տիպաբանական բնորոշ առանձնահատկություններով, սուր և սպանիչ երգիծանքով:

XIX դարավերջի Շուշիի մշակութային, սոցիալ-տնտեսական, քաղաքական կյանքի բազմաբովանդակ պատկերն է վիպականացնում Արցախի ու արցախցիների առտնին հոգսերի, վարք ու բարքի ցայտուն նկարագիրը, որով բացահայտվում են օտար պետությունների երկդիմի խաղերը՝ Արցախի քաղաքական առօրյայում. «19-րդ դարավերջի Արցախի գրականության հարուստ ֆոնին վեր է խոյանում արդարամիտ և ճշմարտախոս Տմբլաչի Խաչանի կերպարը, ով իրավամբ դառնում է Կոստանդին Մելիք-Շահնազարյանի խոսսփողը՝ որպես անարդարությունն ու քաղաքական որոգայթները խարազանող» (սեղմագիր, էջ 41):

Քանի որ խոսքը վերաբերում է բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան շնորհելու խնդրին, ապա ես անչափ կարևորում եմ իմ՝ պաշտոնական ընդդիմախոսիս եզրակացության մեջ գրականագիտության առարկայից բացի անդրադառնալ նաև ատենախոսի մարդկային տեսակի բնութագրմանը, որը ԲՈԿ-ի կողմից ներկայացվող կանոնադրական պահանջ է: Ուստի ուզում եմ ընդգծել, որ տիկին Զինաիդա Բալայանը իր ողջ ապրած կյանքով եղել է բարձր սկզբունքների տեր քաղաքացու տիպար, որպես Ստեփանակերտի պետական համալսարանի դասախոս և մանկավարժ: Նրա երկու որդիները՝ Հովիկը 16 և Մխիթարը 13-14 տարեկանից անձնուրաց մասնակցում են Արցախյան գոյամարտին, իսկ Հովիկը մինչև հիմա էլ զինվորական հերթապահություն է կատարում Շուշիի շրջանում:

Ուստի միջնորդում եմ գիտական կոչումներ շնորհող խորհրդի առաջ տիկին Զինաիդա Բալայանին ներկայացրած ատենախոսության համար շնորհել բանասիրական գիտությունների դոկտորի գիտական կոչում: Ներկայացված սեղմագիրը լիովին համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

14.12. 2021 թ.

Պաշտոնական ընդդիմախոս՝



Ա. Բերտ Վարազդատի Մուշեղյան  
բան.գիտ.դոկտոր